



# Armenian Church Of Our Saviour

Ս. ՓՐԿԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ

Rev. Fr. Garabed Kochakian  
Pastor

27697

2 Փետրուար 1982

Գերաշնորհ  
Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
Քարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք

Սիրելի Սրբազան Հայր,

Այսու կուզանք յայտնել Ձերդ Սրբազանութեան թէ եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը զուամրուեցաւ Կիրակի Յունուար 31, 1982 Սուրբ Պատարագի մատուցման ետք 68 անդամներու ներկայութեան: Քուէարկութեան 164 տրատու անդամներ մասնակցեցան: Եկեղեցւոյս անդամներուն թիւն է 512:

Օրինաւոր կերպով կատարուեցաւ ընտրութիւնը ծխական խորհուրդին, Ընտրողական Յանձնախումբին եւ Հաշուեքննիչ Յանձնախումբին: Ծխական խորհուրդի նորընտիր անդամներ են-Տիարք Լեւոն Խաջատուրեան, Աբրահամ Սիւազեան, Օր. Էնն Յովհաննէսեան, Ղեւոնդ Յակոբեան, Զավէն Կասպարեան: Եւ ժան Սակարեան: Յաջորդ առաւելագոյն քուէ ստացած անձն է Սթէնֆորտ Յակոբեան-Կրպար:

Համաձայն Ձերդ Սրբազանութեան Սեպտեմբեր 1, 1981 նամակին եւ թիւ 517 շրջաբերականին, ներփակ կը գտնէք եկեղեցւոյս տարեկան տեղեկագիրներու պրակը, ինչպէս նաեւ ծխական ժողովի ընտրութեանց արդիւնքը, ընտրութեանց Քուէաթուղթէն օրինակ մը թեկնածուներուն անուններով եւ ստացած քուէներով, Թեմական Պատգամաւորներու անուններ, Կասցէներ եւ Կեռածայնի թիւերը, եկեղեցական կազմակերպութեանց վարչական մարմիններու ատենապետներու անունները, Կասցէները եւ Կեռածայնի թիւերը, Առաջնորդարանէն ղրկուած տպագրեալ տեղեկագիրները անհրաժեշտ ստորագրութիւններով, ծխական ժողովի ատենագրութիւնը, ծխական ժողովին ներկայացուած ելեւմտական Կաշուեկշիռը եւ անդամներուն ղրկուած Կրակարգէն ու օրակարգէն օրինակ մը:

Յանձնելով վերոյիշեալ գրութիւնները Ձերդ բարձր նկատողութեան կը սպասենք ծխական խորհուրդի ընտրութեանց վաւերացման:

Մնամք խորհուրդաբար աղօթակից  
ի դիմաց ծխական ժողովի

*Տէր Կարապետ Բնյ. Բոչաբեան*

Տէր Կարապետ Բնյ. Բոչաբեան  
Նախագահ

